



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ՔԻՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ ՈՒ Ղ Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«15» հունվարի 2019 թ.

N 24-Ա

**ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականին նոյեմբերի 15-ի «Տեղափոխության, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները սահմանելու մասին» N 1303-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 17-րդ կետի 1-ին ենթակետը ու Արամ Աշոտի Խաչատրյանի դիմումը՝

հրամայում եմ.

1. Արամ Աշոտի Խաչատրյանին 2019 թվականի հունվարի 15-ից փոխադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչի /ծածկագիր՝ 64-2.2-37/ պաշտոնին, ազատելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալի /ծածկագիր՝ 64-2.2-44/ պաշտոնից:

Աշխատավարձը և վարձատրության հետ կապված այլ հարաբերություններ սահմանվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 15-ից:

Недействительная подпись



**Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ ՈՒ Ղ Ա Ր՝**

Подписано: Екенов СИСС

**ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ**